



2015

ARMECONOMBANK

ՀԱՅԵԿՈՆՈՍԲԱՆԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ANNUAL REPORT

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	3	FINANCIAL RESULTS
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ	5	MESSAGE BY THE CHAIRMAN OF THE BOARD
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ	9	MESSAGE BY THE CHAIRMAN OF THE EXECUTIVE BOARD
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	12	HISTORICAL REVIEW
ԱԿՏԻՎՆԵՐ	20	ASSETS
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ	21	LOANS TO CUSTOMERS
ԱՐԺԵԹՂԹԵՐ	22	SECURITIES
ՊԱՍԻՎՆԵՐ	23	LIABILITIES AND EQUITY
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24	LIABILITIES
ԿԱՊԻՏԱԼ	25	EQUITY
ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ	27	INCOME AND EXPENSES
ՇԱՀՈՒՅԹ, ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	28	PROFIT, PROFITABILITY
ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	29	RISK MANAGEMENT
ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	32	INTERNAL CONTROL SYSTEM
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	33	SERVICES AND CUSTOMERS
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34	CLEARING SERVICES, DOCUMENTARY OPERATIONS
ԿԱՂՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	35	HUMAN RESOURCES
ՍԱՄՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ	36	BRANCH NETWORK

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ	38	ARMECONOMBANK OJSC BRANCHES PER REGION
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	42	INDEPENDENT AUDITOR'S REPORT
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ	44	STATEMENT OF FINANCIAL POSITION
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ	46	STATEMENT OF PROFIT OR LOSS AND OTHER COMPREHENSIVE INCOME
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ	48	STATEMENT OF CASH FLOWS
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	51	STATEMENT OF CHANGES IN EQUITY
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	53	STATEMENT OF MAIN ECONOMIC STANDARDS
ՆՈՍՏՐՈ ԵՎ ԼՈՐՈ ՀԱՇԻՎՆԵՐ	54	NOSTRO AND LORO ACCOUNTS

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Կորպորատիվ կառավարման
տարեկան հայտարարագիր

ARMECONOMBANK OJSC
Corporate Governance
Annual Declaration

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

FINANCIAL RESULTS

Ցուցանիշներ / Indicators	31.12.13	31.12.14	31.12.15
Ընդհանուր ակտիվներ (մլն. դրամ) Total assets (mln AMD)	74,163.3	91,919.0	108,395.2
Հաճախորդներին տրված վարկեր (մլն. դրամ) Loans to customers (mln AMD)	40,693.7	52,057.4	59,175.2
Արժեթղթեր (վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ՝ Բանկի կողմից պահվող, հետգնման պայմանագրերով գրավադրված) (մլն. դրամ) Securities (financial assets available for sale - kept with Bank, pledged under repurchase agreements) (mln AMD)	7,145.5	6,168.3	8,866.0
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլն. դրամ) Liabilities to customers (mln AMD)	44,391.8	57,525.3	61,974.0
Կանոնադրական կապիտալ (մլն. դրամ) Chartered capital (mln AMD)	2,333.3	2,333.3	2,333.3
Ընդամենը սեփական կապիտալ (մլն. դրամ) Total equity (mln AMD)	11,063.5	11,071.0	15,000.1
Զուտ շահույթ (մլն. դրամ) Net profit (mln AMD)	716.7	816.8	449.3



Սարիբեկ Սուքիասյան, Խորհրդի նախագահ
Saribek Sukiasyan, Chairman of the Board



Հարգելի բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ.

Dear Shareholders, Customers, and Partners,

Ուրախ եմ ողջունելու Ձեզ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անունից:

I am pleased to welcome you on behalf of the Board of ARMECONOMBANK OJSC.

Ներկայացնելով Բանկի 2015թ. տարեկան հաշվետվությունը՝ պետք է գոհունակությամբ նշեմ, որ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»-ը որդեգրած զարգացման ռազմավարության հետևողական իրականացման շնորհիվ կարողացավ դիմակայել ֆինանսատնտեսական շուկայի մարտահրավերներին, ապահովեց հիմնական ցուցանիշների զգալի աճ և շարունակում է իր ակտիվ գործունեությունն ու դինամիկ զարգացումը: Որպես Բանկի արդյունավետ գործունեության վկայություն՝ կցանկանայի նշել ներկայիս տնտեսական ոչ բարենպաստ միջավայրի առկայության պայմաններում նոր ռազմավարական հաճախորդների ներգրավումը, բանկային նոր պրոդուկտների և ծառայությունների առաջարկի ավելացումը, հաճախորդների և գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության շրջանակների ընդլայնումը: Բանկի բնականոն գործունեությանն են նպաստել նաև կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ճշգրիտ և արդյունավետ կառավարումը:

As I present the Annual Report of the Bank for 2015, I am delighted to note that thanks to consistent implementation of its development strategy ARMECONOMBANK was able to meet the challenges in the financial-economic market, achieve significant growth of its main indicators, and keep up its active operations and dynamic development. As evidence of the efficient activity of the Bank in the current unfavorable economic environment, I would like to mention the attraction of new strategic customers, the more extensive offer of new banking products and services, and the expanded framework of mutually beneficial cooperation with our customers and partners. The precise and efficient use of the existing systems of corporate governance, internal control, and risk management has further contributed to the Bank's normal course of business.

Հաշվետու տարում Բանկն արդեն իսկ սկսել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած՝ 2017թ. հունվարի 1-ից 30.0 մլրդ ՀՀ դրամ նորմատիվային կապիտալի նվազագույն շեմի պահանջին իր կապիտալի համապատասխանեցման գործընթացը. մասնավորապես, 2015թ. բանկն իր հիմնական բաժնետերերից ներգրավեց 3.5 մլն ԱՄՆ դոլար և 2.7 մլրդ ՀՀ դրամ երկարաժամկետ ստորադաս փոխառություն, ինչպես նաև հունիսի 3-ին սկսեց և դեկտեմբերի 30-ին ավարտեց բաժնետոմսերի տեղաբաշխման գործընթացը, որի արդյունքում կապիտալը համալրվեց ավելի քան 4.0 մլրդ ՀՀ դրամով: Նշեմ նաև, որ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև դեկտեմբեր ամսին ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով և այժմ օրենսդրության պահանջների համաձայն իրականացվում է միավորման գործընթացը:

In the accounting year, the Bank initiated the process of bringing its equity into compliance with the AMD 30.0 bn regulatory threshold effective from 1 January 2017 as announced by RA Central Bank. In particular, in 2015 the Bank attracted USD 3.5 mln and AMD 2.7 bn long-term subordinated borrowings from its key shareholders and conducted allocation of shares from 3 June to 30 December, which supplemented the equity with over AMD 4.0 bn. I should also mention that in December the managements of ARMECONOMBANK OJSC and BTA Bank CJSC of Kazakhstan signed a memorandum for consolidation of BTA Bank CJSC, a unit registered and operating in Armenia, with ARMECONOMBANK OJSC, and currently the consolidation activities are in progress in accordance with the existing law.

Հաշվետու տարում Բանկը շարունակեց փոխշահավետ համագործակցությունը միջազգային ֆինանսավարկային կառույցների և արտերկրի խոշորագույն առևտրային բանկերի ու ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, 2015թ. է՛լ ավելի խորացվեց համագործակցությունը Բանկի ավանդական գործընկերների հետ՝ ՎՉԵԲ, ԳՀՀ, ՄՖԿ, Սևծովյան Առևտրի և Ջարգացման

In the accounting year the mutually beneficial cooperation continued with international finance and credit structures and major foreign commercial banks and financial institutions. In particular, the year of 2015 brought closer cooperation with the Bank's traditional partners such as EBRD, GAF, IFC, BSTDB, ADB, Blue Orchard Microfinance Fund LLC investment company, etc. This is another proof of ARMECONOMBANK's reputation of a reliable partner and a steadily developing financial institution in the international finance and credit market. It was also due to this cooperation that the Bank proceeded with the introduction of new banking products and technologies and implemented a number of loan projects that support the country's economy.

The efforts towards retaining its customers and attracting new ones have been among the most important objectives of the Bank's strategy along with the permanent focus on improvement of customer service quality and expansion of the range of new and up-to-date banking services.

Բանկ, Ասիական Ջարգացման Բանկ, «BLUE-ORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության և այլն: Սա ևս ապացույց է, որ միջազգային ֆինանսավարկային շուկայում «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ»-ը դիտվում է որպես հուսալի գործընկեր և կայուն զարգացող ֆինանսավարկային կազմակերպություն: Նաև այդ համագործակցության շնորհիվ Բանկը շարունակեց ներդնել նոր բանկային պրոդուկտներ և տեխնոլոգիաներ, իրականացրեց երկրի տնտեսությունը խթանող մի շարք վարկային ծրագրեր:

Բանկի որդեգրած ռազմավարության կարևոր խնդիրներից է առկա հաճախորդների պահպանումը և նոր հաճախորդների ներգրավումը՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը, նոր, ժամանակակից բանկային ծառայությունների մատուցման ընդլայնումը:

Սուր մրցակցության պայմաններում Բանկի դիրքերի պահպանումը բանկային ծառայությունների մի շարք ոլորտներում պահանջում է մշտապես կատարելագործել և բազմազանել ծառայությունները, առաջարկել նորերը, կատարելագործել տեխնոլոգիաները և յուրացնել նոր շուկաները: Դրանով իսկ պայմանավորված, զարգացման առաջանցիկ տեմպեր ապահովելու նպատակով, Բանկը շարունակելու է ավելացնել իր ծառայությունների ցանկը՝ հաճախորդներին առաջարկելով ծառայությունների նոր և ընդգրկուն փաթեթներ:

Բանկի ղեկավարությունն ու ամբողջ անձնակազմը մոտ ապագայում պատրաստակամ է իրագործել բազում ծրագրեր. նոր մասնաձյուղերի բացում, պլաստիկ քարտերի նոր տեսակների թողարկում, քարտերի սպասարկման ցանցի ընդլայնում, նոր վարկատեսակների առաջարկ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար: Գիտակցելով Բանկի սոցիալական պատասխանատվությունը, իրագործելու ենք նաև մի շարք բարեգործական եւ սոցիալական ծրագրեր: Այս ամենով ձգտելու ենք մեր գործելառձով առավել գրավիչ եւ վստահելի դառնալ հասարակության լայն շերտերի համար:

Շնորհակալություն հայտնելով մեր բաժնետերերին, գործընկերներին և հաճախորդներին համագործակցության համար՝ հավաստիացնում են, որ հավասարակշռված ռազմավարության, ժամանակակից մոտեցումների և տեխնոլոգիաների կիրառմամբ, բանկի հաճախորդների, գործընկերների, բաժնետերերի, անձնակազմի փոխշահավետ համագործակցության հիման վրա, մենք կունենանք նորանոր հաջողություններ՝ ի բարօրություն մեզ բոլորիս:

Ս. Սուքիասյան

To maintain the Bank's positions in a number of areas of banking services in conditions of intense competition, we are required to continuously improve and diversify our services, introduce new ones, and access new markets. For this reason, to keep up its progressive development pace, the Bank will continue to increase the number of its services by offering its customers new and comprehensive service packages.

The Bank's management and all of the personnel are ready to launch a multitude of new projects, open new branches, offer new types of cards, expand the card service network, launch new types of corporate and retail loans. Conscious of its social responsibility, the Bank intends to accomplish a number of charitable projects as well. All these efforts will be aimed at making our activities more attractive and reliable for wider groups of the society.

As I thank all of the Bank's shareholders, partners, and customers for cooperation, I would like to assure that through our balanced strategy, use of advanced approaches and technologies, and thanks to the mutually beneficial cooperation with the Bank's customers, partners, shareholders, and personnel we will have many more achievements to the benefit of all of us.

S. Sukiasyan

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

MEMBERS OF THE BOARD



Արամ Մելիքյան
Խորհրդի նախագահի տեղակալ
Aram Melikyan
Deputy Chairman of the Board



Լուիզա Պետրոսյան
Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար
Luiza Petrosyan
Member of the Board, Secretary of the Board



Ռուբեն Հայրապետյան
Խորհրդի անդամ
Ruben Hayrapetyan
Member of the Board



Իրակլի Մանագաձե
Խորհրդի անդամ
Irakli Managadze
Member of the Board



Արմեն Նալջյան, Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն
Armen Naljyan, Chairman of the Executive Board, CEO

Հարգելի տիկնայք և պարոնայք.

Ladies and Gentlemen,

Պատիվ ունեն ողջունել Ձեզ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ վարչության անունից և ներկայացնել բանկի 2015թ. գործունեության տարեկան ամփոփ հաշվետվությունը:

Հաշվետու՝ 2015թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հավատարիմ մնալով սահմանված ռազմավարական նպատակների արդյունավետ իրագործման ավանդույթին, արձանագրեց մի շարք էական նվաճումներ և հիմնական ցուցանիշների զգալի աճ՝ շնորհիվ հաճախորդների վստահության, հավատարմության և Բանկի աշխատակիցների նվիրված ջանքերի՝ ապահովելով բանկի շարունակական կայուն զարգացումը և գործունեության որակապես նոր՝ առավել արդիական փուլին անցումը:

Հաշվետու տարում, Բանկի ակտիվներն աճել են 17.9%-ով՝ կազմելով 108.4 մլրդ դրամ, հաճախորդներին տրված վարկերը՝ 13.7%-ով՝ կազմելով 59.2 մլրդ դրամ, հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 7.7%-ով կամ 4.45 մլրդ դրամով՝ կազմելով 62.0 մլրդ դրամ, որի հիմքում ընկած է բանկի, հաճախորդների և գործընկերների միջև փոխվստահության և փոխշահավետության առողջ հենքի վրա ձևավորված երկարատև կայուն համագործակցությունը: Բանկի ընդհանուր կապիտալն աճել է 35.5%-ով՝ նոր բաժնետոմսերի թողարկման և ձևավորված շահույթի հաշվին՝ կազմելով 15.0 մլրդ դրամ: Բանկը 2015թ. ձևավորել է 449.3 մլն. դրամի շահույթ, որը կնպաստի բանկի առաջիկա զարգացմանը և մշակված առաջխաղացման ծրագրերի արդյունավետ իրագործմանը:

Նշեն նաև, որ հաշվետու՝ 2015թ. Բանկն արդեն իսկ սկսել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ 2017թ. հունվարի 1-ից 30.0 մլրդ ՀՀ դրամ նորմատիվային կապիտալի նվազագույն շեմի պահանջին իր կապիտալի համապատասխանեցման գործընթացը. 2015թ. բանկն իր հիմնական բաժնետերերից ներգրավեց 3.5 մլն ԱՄՆ դոլար և 2.7 մլրդ ՀՀ դրամ երկարաժամկետ ստորադաս փոխառություն, ինչպես նաև հաջողությամբ իրականացրեց բաժնետոմսերի 12-րդ թողարկման և տեղաբաշխման գործընթացը, որի արդյունքում կապիտալը համարվեց ավելի քան 4.0 մլրդ ՀՀ դրամով, իսկ բաժնետերերի քանակը ավելացավ 1,600-ով՝ հասնելով ավելի քան 3,000-ի: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրված երկու բանկերի միացման հուշագրի համաձայն ընթանում է ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միավորելու գործընթացը: Միավորումից հետո «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կապիտալը կավելանա ևս 5.2 մլրդ դրամով:

Միջազգային ֆինանսական շուկայում Բանկը շարունակում է ընդլայնել համագործակցության շրջանակները՝ գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ներառելով բանկային ծառայությունների նորանմուծությունների բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրումը և տեղական

I am honored to welcome you on behalf of ARMECONOMBANK OJSC Executive Board and to present the concise report on the Bank's operations in 2015.

In the accounting year of 2015, ARMECONOMBANK OJSC continued the traditionally efficient implementation of its strategic objectives and had a number of important achievements and significant growth of its basic indicators thanks to the customers' trust and loyalty and the dedicated efforts of the Bank's employees to provide for steady continuous development and transition to a new, more advanced phase of activity.

In the accounting year, the Bank's assets increased by 17.9% and reached AMD 108.4 bn., loans to customers increased by 13.7% and amounted to AMD 59.2 bn, liabilities to customers increased by 7.7% or AMD 4.45 bn and amounted to AMD 62.0 bn, due to the long-lasting strong cooperation between the Bank, its customers, and partners, which has developed on the healthy ground of mutual trust and benefit. Total equity of the Bank increased by 35.5% and reached AMD 15.0 bn on the account of new emission of shares and generated profit. In 2015, the Bank earned AMD 449.3 mln of profit which will contribute to the Bank's further development and efficient implementation of the developed promotional projects.

I must mention that in the accounting year of 2015 the Bank started the process of bringing its equity into compliance with the AMD 30.0 bn regulatory threshold effective from 1 January 2017 as announced by RA Central Bank; in 2015 the Bank attracted USD 3.5 mln and AMD 2.7 bn long-term subordinated borrowings from its key shareholders and successfully completed the 12th emission and allocation of shares, which supplemented the equity with over AMD 4.0 bn and increased the number of the shareholders by 1,600, now over 3,000 in total. Under the memorandum signed by the managements of ARMECONOMBANK OJSC and BTA Bank CJSC of Kazakhstan, the process of consolidation of BTA Bank CJSC, a unit registered and operating in Armenia, with ARMECONOMBANK OJSC continues. When finalized, the consolidation will add AMD 5.2 bn to the equity of ARMECONOMBANK OJSC.

In the international financial market, the Bank continued to expand the framework of its cooperation with the partner financial institutions, which includes study of international practices in the sphere of new banking services and implementation of localized versions of relevant products, improvement of personnel proficiency and expert skills through seminars and training programs, offer of up-to-date and beneficial loan products to Armenian organizations through various finance projects, etc. In 2015, under an agreement between ARMECONOMBANK OJSC and Blue Orchard Microfinance Fund LLC, the Bank borrowed a USD 3 mln facility for lending to small and micro businesses.

The Bank's achievements, accomplishments, and good reputation are based on continuous improvement of

շուկայում համապատասխան պրոդուկտների ադապտացված տարբերակների ներդրումը, սեմինարների և վերապատրաստման ծրագրերի միջոցով աշխատակիցների արհեստավարժության մակարդակի բարձրացումը և մասնագիտական հմտությունների կատարելագործումը, ֆինանսավորման տարբեր ծրագրերի միջոցով ՀՀ կազմակերպություններին արդիական և շահավետ պայմաններով վարկային պրոդուկտների առաջարկը և այլն: 2015թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և «BLUEOR-CHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն բանկը ներգրավեց 3 միլիոն ԱՄՆ դոլարի միջոցներ, որոնք ուղղվելու են փոքր և միկրո բիզնեսի վարկավորմանը:

Բանկի նվաճումների, ձեռքբերումների և բարի համբավի հիմքում դրված են հաճախորդների սպասարկման որակի շարունակական բարձրացումը, մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնումը և նորամուծությունների կիրառումը, որի հավաստիքներից մեկն էլ հաշվետու տարում «MoneyGram» վճարահաշվարկային համակարգի կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին «Պրոֆեսիոնալիզմի և Հայաստանում փոխանցման ծառայությունների զարգացմանը նպաստելու համար» հավաստագրի շնորհումն է:

2015թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն դարձել է արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ, ինչպես նաև ի թիվս այլ վճարահաշվարկային համակարգերի բանկը միացել է «CONVERSE TRANSFER» վճարահաշվարկային համակարգին, հաճախորդներին տալով ընտրության լայն հնարավորություն:

Բանկի հաջողությունների գրավականներից մեկն էլ լայն տարածքային ցանցի առկայությունն է, որի ընդլայնումը և ամրապնդումը ենթադրում է գործող մասնաձյուղերին անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ապահովում, տարածաշրջանների ուսումնասիրում, նոր շուկաների բացահայտում և նոր մասնաձյուղերի գործարկում: Հաշվետու տարում գործող մասնաձյուղերում իրականացվեցին տեխնիկական վերազինման և վերանորոգման աշխատանքներ, որը նպատակ ունի բարձրացնել թե՛ հաճախորդների սպասարկման, թե՛ ներքին աշխատանքների կազմակերպման մակարդակը, ինչպես նաև աշխատանքներ են տարվում առաջիկայում ևս Երևան քաղաքում և ՀՀ մարզերում մասնաձյուղեր բացելու ուղղությամբ:

Հարկ են համարում նաև նշել, որ Բանկի հաջողություններն անհնար կլինեին առանց համախմբված, վճռական և բարձրակարգ որակավորմամբ աշխատանքային թիմի, առանց նրա մասնագիտական հմտությունների և աշխատանքային պատասխանատվության:

Վստահության և աջակցության համար շնորհակալություն հայտնելով մեր հաճախորդներին, բաժնետերերին և գործընկերներին՝ հավաստիացնում են, որ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն առաջիկայում ևս կշարունակի իր ակտիվ գործունեությունը բանկային համակարգում՝ որպես կայուն, վստահելի և կանխատեսելի ֆինանսական կառույց:

Ա. Նալջյան

customer service quality, expansion of the service range, and introduction of new approaches, the evidence to which is the Certificate for “Professionalism and Outstanding Contribution for Money Transfer Service Development in Armenia” granted to ARMECONOMBANK OJSC by MoneyGram clearing system in 2015.

In 2015, ARMECONOMBANK OJSC became a member of the securities index system and, in addition to other operating clearing systems, joined CONVERSE TRANSFER to offer the customers a wider choice.

Another guarantee for the Bank's accomplishments is its wide territorial network which is further strengthened by providing the existing branches with necessary technical facilities, area studies, identification of new markets, and setup of new branches. In the accounting year, more technical refurbishment and reconstruction works were carried out in the existing branches to improve both the customer service and the internal working arrangements parallel to the ongoing activities towards opening more branches both in Yerevan and in other Armenian regions.

I must also state that the Bank's achievements would have been impossible without its consolidated, assertive, and highly qualified team of experts, without their professional skills and business responsibility.

Thanking our customers, shareholders, and partners for their trust and support, I assure you that ARMECONOMBANK OJSC will keep up its strong performance in the banking sector as a sustainable, reliable, and predictable institution.

A. Naljyan

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐ

MEMBERS OF THE EXECUTIVE BOARD



Ռուբեն Բադալյան
Վարչության նախագահի տեղակալ
Գործադիր տնօրենի տեղակալ-
գանձապետ
Ruben Badalyan
Deputy Chairman of the Executive Board



Օնիկ Չիչյան
Վարչության նախագահի տեղակալ
Կորպորատիվ և մանրածախ
քիզնեսի գծով տնօրենի տեղակալ
Onik Chichyan
Deputy Chairman of the Executive
Board, Deputy CEO



Արտակ Առաքելյան
Վարչության նախագահի տեղակալ
Գործառնական գծով տնօրենի
տեղակալ
Artak Arakelyan
Deputy Chairman of the Executive
Board
Head of Territorial Management
Department



Աստղիկ Մանրիկյան
Վարչության նախագահի տեղակալ
Միջազգային և զարգացման գծով
տնօրենի տեղակալ
Astghik Manrikyan
Deputy Chairman of the Executive
Board, Deputy Director of Foreign
Affairs and Development



Դավիթ Ազատյան
Վարչության անդամ
Գլխավոր հաշվապահ
Հաշվապահական հաշվառման
վարչության պետ
Davit Azatyan
Member of the Executive Board
Chief Accountant
Head of Accounting Department



Արթուր Առաքելյան
Վարչության անդամ
Վարկավորման վարչության պետ
Artur Arakelyan
Member of the Executive Board
Head of Lending Department



Հայկ Ավետիսյան
Վարչության անդամ
Ռազմավարության և ռիսկերի
կառավարման վարչության պետ
Hayk Avetisyan
Member of the Executive Board
Head of Strategy and Risk
Management Department



Վրեժ Ջհանգիրյան
Վարչության անդամ
Իրավաբանական վարչության պետ
Vrezh Jhangiryan
Member of ARMECONOMBANK OJSC
Executive Board
Head of Legal Department



Արամայիս Գալստյան
Վարչության անդամ
Պլաստիկ քարտերի վարչության պետ
Aramayis Galstyan
Member of the Executive Board
Head of Plastic Cards Department

1991
 Գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում, որպես Բաց Բաժնետիրական Ընկերություն (Գրանցում թիվ 1):

Registered with the Central Bank of Armenia as a joint-stock company (Record # 1).

1997
 Դարձել է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետական պարտքի կառավարման գործակալ:

Became a paying agent for the Armenian Ministry of Finance and Economy.

Արտոնագրվել է ՀՀ-ում Համաշխարհային Բանկի կողմից իրականացվող փոքր և միջին բիզնեսի զարգացման ֆինանսավորման ծրագրին:

Was licensed to participate in World Bank's financing project for small and medium business development in Armenia.

Անցել է Բանկի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին:

Adopted the International Accounting Standards.

1999
 Մասնակից է դարձել Լինսի հիմնադրամի փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծրագրին:

Participated in the loan project for small and medium-size businesses of Lincy Foundation.

Միացել է WESTERN UNION միջազգային փոխանցումների համակարգին՝ ընդգրկելով իր ողջ մասնաճյուղային ցանցը:

Joined WESTERN UNION international transfer system and engaged its entire branch network in operations.

2000
 Հիմնադրել է «էկոնոմիկասացիա» դուստր ընկերությունը:

Established Econominkasatsia cash collection subsidiary company.

Մասնակցել է ՀՀ-ում պլաստիկ քարտերով միասնական վճարային համակարգի ծնավորման նպատակով ստեղծվող «Արմենիան քարդ» ՓԲԸ-ի հիմնադրմանը:

Participated in the establishment of Armenian Card CJSC created to develop a unified plastic card payment system in Armenia.

Գործարկել է լոկալ (դեբետային, կրեդիտային) պլաստիկ քարտերի սեփական համակարգը:

Launched its own local (debit and credit) plastic card system.

Առաջինը ՀՀ բանկային համակարգում, առանց պետական երաշխավորության, պայմանագիր է կնքել Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) հետ, 1 մլն. ԱՄՆ դոլարի սահմաններում վարկային ծրագիր իրականացնելու նպատակով:

The first in the Armenian banking sector, signed an agreement with the European Bank for Reconstruction and Development (EBRD) to carry out a loan project for USD 1 mln without state guarantee.

Գործարկել է HomeBanking սկզբունքով, առանց Բանկ այցելելու, հաճախորդների սպասարկման համակարգը:

Launched Home Banking customer service system eliminating the need to show up at the Bank.

Մասնակցել է «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ընկերության հիմնադրմանը:

Participated in the establishment of SIL Insurance, an insurance company.

2000թ. արդյունքներով ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

For 2000 performance results, was declared the best paying agent for the Government upon a joint decision by CB and Ministry of Economy and Finance of RA.

2001

2001թ. արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

For 2001 performance results, was declared the best paying agent for the Government upon a joint decision by CB and Ministry of Economy and Finance of RA.

2001թ. արդյունքներով AMEX-ի (American Express Bank Ltd., New York) կողմից ճանաչվել է ՀՀ լավագույն սպասարկող Բանկ և ստացել է որակի սերտիֆիկատ:

Was recognized the best servicing Armenian bank in 2001 by AMEX (American Express Bank Ltd., New York) and received Quality Performance Certificate.

Ներդրվել է մասնաճյուղերի ռեյտինգավորման համակարգ: Սահմանվել է վարձատրություն ըստ ռեյտինգի արդյունքների:

A rating system was incorporated for the branches. Remuneration system based on the results of the rating was implemented.

Գործարկել է «Գերմանա-հայկական հիմնադրամի (ԳՀՀ) միկրո և փոքր բիզնեսի վարկավորման» ծրագրի շրջանակներում աշխատող վարկային մասնագետների աշխատանքի վարձատրման բոնուսային համակարգը:

A new bonus system of remuneration of credit officers working under German-Armenian Fund's (GAF) Micro and Small Business Financing Project was launched.

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 100 մլն. դրամով:

The chartered capital was supplemented with AMD 100 mln.

2002

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 300 մլն. դրամով:

The Chartered Capital was supplemented with AMD 300 mln.

ՎՋԵԲ-ի Առևտրի Խթանման Ծրագրի շրջանակներում ստացել է 500 հազ. ԱՄՆ դոլարի երաշխիքային վարկ:

Received a guarantee facility amounting to USD 500,000 within the framework of Trade Finance Program of EBRD.

2002թ. արդյունքներով AMEX-ի (American Express Bank Ltd., New York) կողմից ճանաչվել է ՀՀ լավագույն սպասարկող Բանկ և ստացել է որակի սերտիֆիկատ:

Was recognized the best servicing Armenian bank in 2002 by AMEX (American Express Bank Ltd., New York) and received Quality Performance Certificate.

Հոկտեմբերին դարձել է EUROPAY INTERNATIONAL վճարային համակարգի ասֆիլիացված անդամ:

In October, became an affiliate member of EURO-PAY INTERNATIONAL clearing system.

2002թ. արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

For 2002 performance results, was declared the best paying agent for the Government of Armenia by the decision of the joint committee of CB of Armenia and The Ministry of Finance and Economy of RA.

2003

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 200 մլն. դրամով:

The chartered capital was supplemented with AMD 200 mln.

ՎՋԵԲ համագործակցությամբ ներդրվել է արտաքին առևտրի խթանմանն ուղղված ակրեդիտիվային ֆինանսավորման նոր գործիք:

In association with EBRD, a new instrument for foreign trade facilitation through LCs was implemented.

Բանկի և «Western Union Financial Services» INC կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն Բանկը, որպես հատուկ ներկայացուցիչ, հնարավորություն է ստացել ՀՀ տարածքում ներգրավել ենթաներկայացուցչություններ (ոչ ֆինանսական կազմակերպություններ՝ տնտեսվարող սուբյեկտներ)՝ դրամական փոխանցումներ իրականացնելու նպատակով:

Բանկը միացել է REUTERS համակարգին:

2004

Բանկի և ԳՀՀ-ի միջև կնքվեց վարկային երաշխիքի պայմանագիր, որով Բանկին հնարավորություն ընձեռնվեց ներգրավել վարկային միջոցներ միջազգային առևտրային բանկերից, որի դիմաց որպես ապահովման միջոց ԳՀՀ-ն թողարկեց մինչև 2.0 մլն. ԱՄՆ դոլարի երաշխիքներ:

Բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ:

Բանկի ու ՎՋԵԲ-ի միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց Բանկի կանոնադրական կապիտալում ՎՋԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎՋԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կկազմի 25%+1 բաժնետոմս:

Գործարկվել են «ԿԵՆՏՐՈՆ», «ԷՐԵԲՈՒՆԻ-1» և «ԱՐԱՐԱՏ» մասնաձյուղերը:

2005

Կանոնադրական հիմնադրամը համարվել է 633.3 մլն. դրամով, որի արդյունքում ՎՋԵԲ մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կազմեց 25%+1 բաժնետոմս:

Բանկի ու ՎՋԵԲ-ի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն Բանկին տրամադրվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ:

ՎՋԵԲ փայամասնակցության շրջանակներում մատուցվող 500.0 հազ. Եվրո տեխնիկական օժանդակության ցուցաբերման մրցույթում հաղթած «Lloyds TSB» Բանկը հունիսից գործունեություն է ծավալել համաձայն հաստատված «Ինստիտուցիոնալ կառուցման պլանի»:

Բանկի և Կոմերցբանկի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն Բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ:

Բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց համաֆինանսավորման պայմանագիր, որի համաձայն Բանկին հատկացվեց 3.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկային գիծ:

Under an agreement with Western Union Financial Services INC., the Bank was authorized as an agent to attract subagents (non-financial institution companies) to execute money transfers.

The Bank joined REUTERS system.

Signed a loan guarantee agreement with GAF, which enabled the Bank to attract loan facilities from international commercial banks covered by guarantees issued by GAF for up to USD 2.0 mln.

Signed a loan agreement with International Finance Corporation (IFC), under which the Bank received a loan of USD 2.0 mln.

Signed an agreement with EBRD, by which the process of EBRD's participation in the chartered capital of the Bank started to result in shareholding of 25%+1share.

Opened KENTRON, EREBOUNI-1 and ARARAT branches.

The Chartered Capital was augmented by AMD 633.3 mln and EBRD participation in the Bank's chartered capital made 25%+1 share.

Signed an agreement with EBRD for AMD 2.0 mln loan to the Bank.

Lloyds TSB Bank, the winner of the USD 500,000-worth tender for technical assistance announced in connection with EBRD's equity participation, started working in line with the approved Institutional Building Plan.

Signed an agreement with Commerzbank for AMD 2.0 mln to the Bank.

Signed a co-financing agreement with EBRD for credit line of AMD 3.0 mln to the Bank.

Բանկն «Արմինֆո» տեղեկատվական գործակալության կողմից արժանացել է ՀՀ առևտրային բանկերի մեջ հիփոթեքային վարկավորում իրականացնող, պլաստիկ քարտերի շուկայում և միջբանկային արտարժույթային շուկայում ակտիվ գործունեություն իրականացնող լավագույն Բանկ նոմինացիային:

2005թ. արդյունքներով ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

Միացել է «Արագ Փոստ» վճարային համակարգին:

Գործարկվել են «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ-1», «ՆԱԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ԱՐԱՐԱՏՅԱՆ», «ԱԳԱՐԱԿ», «ԶՎԱՐԹՆՈՑ», «ԲԱԳՐԱՏԱՇԵՆ», «ՇԻՐԱԿ», «ԽՈՐԵՆԱՏՍԻ», «ԳՈՒԳԱՐՔ», «ՍԻՍԻԱՆ», «ԱՅՐՈՒՄ» և «ԲԱՎՐԱ» մասնաճյուղերը:

2006

Երևանում մարտ ամսին Բանկի և ՎՋԵԲ-ի կողմից համատեղ կազմակերպվեց և անցկացվեց Առևտրի ֆինանսավորման միջազգային բանկային կոնֆերանսը:

Մայիսին Բանկի և ՄՖԿ-ի միջև կնքվեց «Առևտրի խթանման և երաշխիքների տրամադրման» պայմանագիր:

Բանկը «Lufthansa» գերմանական ավիաուղիների և ավտոմեքենաների վարձույթի «Hertz» ընկերության հետ համատեղ թողարկեցին «MasterCard standard» քարտեր, որը հնարավորություն է տալիս քարտատերերին օգտվել «Lufthansa» գերմանական ավիաուղիների և ավտոմեքենաների վարձույթի «Hertz» ընկերության ծառայություններից զեղչերով ավելի քան 150 երկրներում:

Դեկտեմբերին ՎՋԵԲ-ի և Բանկի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլար գումարի վարկ, որն ուղղվել է բացառապես հիփոթեքային վարկավորմանը: Սա ՎՋԵԲ-ի Հայաստանի Հանրապետությունում իրականացվող առաջին հիփոթեքային ծրագիրն է:

2006թ. արդյունքներով ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ կառավարության լավագույն գործակալ:

Բանկն արժանացավ «City Group»-ի լավագույն սպասարկող գործընկերոջ սերտիֆիկատին:

Միացել է «Migom» վճարային համակարգին:

Գործարկվել են «ԱԶԱՓՆՅԱԿ», «Գոգավան», «ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» և «ՈՈՍԻԱ» մասնաճյուղերը:

Won in the nomination of the Best Bank (among all Armenian commercial banks) in mortgage loans, plastic cards, and interbank foreign exchange from Arminfo news agency.

For 2005 performance results, was declared the best paying agent for the Government of Armenia by the decision of the joint committee of CB of Armenia and The Ministry of Finance and Economy of RA.

Joined Bistraya Pochta clearing system.

Opened KHORHRDAYIN-1, NAIRI MEDICAL CENTER, ARARATYAN, AGARAK, ZVARTNOTS, BAGRATASHEN, SHIRAK, KHORENATSI, GUGARK, SISIAN, AYROUM, and BAVRA branches.

International Banking Conference on Trade Finance was organized and held jointly by the Bank and EBRD in Yerevan in March.

In May, signed an Agreement on Trade Facilitation and Issuance of Guarantees with IFC.

Together with Lufthansa German air travel company and Hertz Rent-a-Car, issued co-branded MasterCard Standard cards which offer the cardholders discounts in more than 150 countries for services of Lufthansa and Hertz.

In December, signed a loan agreement with EBRD, under which USD 2.0 mln was extended to the Bank exceptionally for mortgage lending. This is EBRD's first mortgage lending project in Armenia.

For 2006 performance results, by a joint resolution of the Central Bank of Armenia and the Ministry of Finance and Economy of RA, was recognized the best paying agent of the Armenian Government.

The Bank was granted a Certificate of the Best Servicing Partner by City Group.

Joined Migom clearing system.

Opened AJAPNYAK, GOGAVAN, NORK-MARASH, and ROSSIA branches.

Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ Բանկին շնորհեց ֆինանսական կայունության E+ և ՀՀ դրամով ու արտարժույթով երկարաժամկետ ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

Ապրիլին վերանայելով շնորհված վարկանիշները՝ Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը Բանկին արժանացրել է ավելի բարձր՝ ֆինանսական կայունության D- և ՀՀ դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշների, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

Փետրվարին Բանկի և ՄՖԿ-ի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի և հիփոթեքային վարկավորմանը:

Հունիսին հայկական բանկերից առաջինը Բանկն արժանացավ գերմանական Commerzbank AG Բանկի Միջազգային արտարժույթային փոխանցումների որակի սերտիֆիկատին՝ միջազգային փոխանցումների արագ և որակյալ կատարման համար:

Հուլիսին Բանկի և ԳՀՀ-ի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկը 2007թ. տրամադրեց 103.5 մլն. ՀՀ դրամի հիփոթեքային վարկեր:

Հոկտեմբերին Բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկին հատկացվեց 3.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվել է միկրո և փոքր բիզնեսի վարկավորմանը:

Ռեկտեմբերին Բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց սինդիկացված վարկի պայմանագիր, որի համաձայն ՀՀ բանկային համակարգի պատմության մեջ առաջին անգամ համաշխարհային ճանաչում ունեցող վեց ֆինանսական հաստատություններ՝ ՎՋԵԲ-ը, գերմանական Commerzbank AG, ավստրիական Raiffeisen Zentralbank Osterreich AG և Bank Austria Creditanstalt AG, հնդկական State Bank of India, թայվանյան Land Bank of Taiwan, անգլիական FBN Bank (UK) Limited բանկերը Բանկին տրամադրեցին 15.0 մլն. ԱՄՆ դոլարի սինդիկացված վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

«Western Union» գործակալությունը ՀՀ-ում առաջին անգամ Բանկին շնորհեց պատվոգիր՝ «Western Union» դրամական փոխանցումների համակարգի հետ Բանկի երկարատև համագործակցության, ՀՀ-ում «Western Union» համակարգի զարգացման մեջ ունեցած նշանակալի դերի՝ ՀՀ-ում «Western Union» ցանցի ընդլայնման և նոր ենթագործակալների ներգրավման համար:

Միացել է «MoneyGram» վճարային համակարգին:

Գործարկվել են «ՆՈՐԱԳԱՎԻԹ» և «ԻՋԵՎԱՆ» մասնաձյուղերը:

In February, for the first time in the Armenian banking sector, Moody's Investors Service, an international rating agency, granted the Bank E+ financial strength and B1 long-term local currency and foreign currency deposit ratings, both with Stable Outlook.

In April, the agency revised its ratings and assigned the Bank D- financial strength and Ba3 long-term local currency and foreign currency deposit ratings, both with Stable Outlook again.

In February, signed an Agreement with IFC for USD 2.0 mln to be used for financing of small and medium businesses and mortgage lending.

In June, became the first bank in Armenia to receive a Certificate of Quality of International Currency Transfers by Commerzbank AG for offering fast and high quality transfers.

In July, signed an agreement with GAF to extend mortgage loans in the amount of AMD 103.5 mln in 2007.

In October, the Bank signed a loan agreement for USD 3.0 mln with EBRD for lending to micro and small enterprises.

In December, the Bank signed a syndicated loan agreement with EBRD in the amount of USD 15.0 mln, a project in which, for the first time in the history of the Armenian banking sector, six internationally recognized financial institutions such as EBRD, Commerzbank AG, Raiffeisen Zentralbank Osterreich AG and Bank Austria Creditanstalt AG, State Bank of India, Land Bank of Taiwan, FBN Bank (UK) Limited were involved. The loan was to be used for financing of small and medium-sized enterprises and mortgage lending.

For the first time in Armenia, Western Union granted the Bank a Honorary Diploma for long-lasting and fruitful cooperation with Western Union and considerable role in the development of Western Union's business in Armenia, as well as expansion of the Western Union network and attraction of new sub-agents.

Joined MoneyGram clearing system.

Opened NORAGAVIT and IJEVAN branches.

Փետրվարին Բանկի և Սևծովյան Առևտրի և Ջարգացման Բանկի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկին հատկացվեց 5.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվեց փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բացվեց միկրովարկավորման մասնագիտացված կենտրոն:

AmRating/GlobalRating վարկանիշային գործակալությունը Բանկին շնորհեց «BB+» վարկային վարկանիշը՝ «հնարավոր բարձրացում» կանխատեսմամբ:

Բանկը և ԱրմենՏելը Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ բացեցին հաճախորդների հեռախոսային սպասարկման (call center) կենտրոն:

Բանկը ՎՋԵԲ-ի կողմից ճանաչվեց ՎՋԵԲ-ի Առևտրի խթանման ծրագրի շրջանակներում փաստաթղթային գործառնություններ իրականացնող տարվա ամենաակտիվ թողարկող Բանկը Հայաստանի Հանրապետությունում:

Միացել է «Blizko» վճարահաշվարկային համակարգին:

Գործարկվել է «ՋԵՅԹՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ:

In February, a USD 5.0 mln loan agreement was signed between the Bank and the Black Sea Trade and Development Bank to finance small and medium business.

A specialized micro-lending center was opened.

AmRating/GlobalRating agency granted the Bank BB+ credit rating with Positive Outlook forecast.

For the first time in Armenia, the Bank and ArmenTel opened a call center for customers.

The Bank was recognized by the EBRD as the most active issuing bank of the year among such engaged in documentary operations under EBRD's Trade Facilitation Project in Armenia.

The Bank joined Blizko clearing system.

Opened ZEYTON BRANCH.

Հունվարին «Առևտրի խթանման ծրագրի» շրջանակներում Միջազգային Ֆինանսական Կորպորացիան Բանկին տրամադրեց 5.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկային գիծ:

Բանկը դարձավ «ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի անդամ և «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ն միակ Բանկն է, որի բաժնետոմսերը ցուցակված են «ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում:

Նոյեմբերին, Բանկի և ՎՋԵԲ-ի միջև 15.12.2005թ. կնքված «Համաֆինանսավորման» ծրագրի իրականացման պայմանագրի շրջանակներում կնքվեց նոր համաձայնագիր, որով մինչ այդ գործող 5.0 մլն. ԱՄՆ դոլար միջոցներին ավելացվեց ևս 2.0 մլն. ԱՄՆ դոլար՝ ծրագրի ընդհանուր արժեքը հասցնելով 7.0 մլն. ԱՄՆ դոլարի:

Բանկը «MoneyGram» միջազգային դրամական փոխանցումների համակարգի կողմից 2009թ. արդյունքներով պարզևատրվեց պատվոգրով և ճանաչվեց 2009թ. լավագույն Բանկ հաճախորդների սպասարկման ոլորտում:

Միացել է «Leader», «Ria Money Transfers», «Zolotaya Korona» վճարահաշվարկային համակարգերին և «Worldlink» միջազգային վճարումների համակարգին:

Գործարկվել է «ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ:

In January, IFC granted the Bank a credit line of USD 5 mln under Trade Facilitation Project.

The Bank became a member of NASDAQ OMX ARMENIA OJSC and the only bank to have its shares listed in Platform B of NASDAQ OMX ARMENIA OJSC.

In November, in addition to the Co-financing Agreement signed with EBRD on 15.12.2005, another USD 2 mln was added to the existing loan of USD 5 mln, thus bringing the total amount of the project to USD 7 mln.

MoneyGram granted the Bank a certificate based on 2009 results and recognized the Bank as the best bank in the area of customer service.

Joined the following clearing systems: Lider, Ria Money Transfers, Zolotaya Korona, and Worldlink.

Opened SHIRAK BRANCH.

Հունիսին Բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց սինդիկացված վարկի թվով երկրորդ պայմանագիրը, որի համաձայն համաշխարհային ճանաչում ունեցող չորս ֆինանսական հաստատություններ՝ ՎՋԵԲ-ը, ավստրիական UniCredit Bank Austria AG, անգլիական FBN Bank (UK) Limited բանկերը և շվեյցարական Blue Orchard Finance ֆինանսական կազմակերպությունը Բանկին տրամադրեցին 10.0 մլն. ԱՄՆ դոլարի սինդիկացված վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Դեկտեմբերին, Բանկի, ՄՖԿ-ի և FMO ֆինանսական կազմակերպության միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկին տրամադրվեց 10.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բանկը «MoneyGram» միջազգային դրամական փոխանցումների համակարգի կողմից 2010թ. արդյունքներով երկրորդ տարին անընդմեջ ճանաչվեց որպես «Հայաստանի Հանրապետությունում համակարգով հաճախորդներին գերազանց սպասարկող բանկ»:

Ավստրիական UniCredit Bank AG-ն «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2010թ. ԵՎՐՈ-ով փոխանցումների բարձր որակ ապահովելու համար:

Միացել է «Contact» և «Coinstar» վճարահաշվարկային համակարգերին:

Գործարկվել է «ԵՂԵԳՆԱԶՈՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ:

Հայաստանում առաջին անգամ ՎՋԵԲ-ն իր գործառույթներով հնարավոր առավելագույն ժամկետով (ևս երեք տարով) երկարաձգեց իր մասնակցությունը (25% +1 բաժնետոմս) Բանկի կանոնադրական կապիտալում:

Բանկի և Ասիական Ջարգացման Բանկի միջև կնքվեց արտաքին առևտրի ֆինանսավորման վարկային գծի տրամադրման պայմանագիր, որի

Բանկի ու Սևծովյան Առևտրի և Ջարգացման Բանկի միջև կնքվեց 5.0 մլն. ԱՄՆ դոլար գումարով թվով երկրորդ վարկային պայմանագիրը, որով ներգրավված միջոցներն ուղղվել են փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բանկի և ՎՋԵԲ միջև կնքվեց 6.0 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարով վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվել են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բանկը դարձել է «VISA» միջազգային վճարահաշվարկային համակարգի անդամ:

Գերմանական Commerzbank AG-ն «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2011թ. ԵՎՐՈ-ով փոխանցումների բարձր որակ ապահովելու համար:

In June, the second syndicated loan agreement was signed between the Bank and EBRD, under which EBRD, UniCredit Bank Austria AG, FBN Bank (UK) Limited, and Blue Orchard Finance of Switzerland extended a USD 10 mln syndicated loan to the Bank for on-lending to small and medium-size businesses.

In December, an agreement was signed with International Finance Corporation and FMO, a financial institution, for USD 10 mln loan designed for on-lending to small and medium-size businesses.

For the second year in a row, the Bank won the recognition of MoneyGram international clearing system for “Excellent customer service in the Republic of Armenia” for its performance in 2010.

UniCredit Bank AG granted the Bank Excellence for Quality Award for high quality EUR transfers in 2010.

Joined Contact and Coinstar clearing systems.

Opened YEGHEGNADZOR BRANCH.

For the first time in Armenia, EBRD extended its participation (25%+1 share) in the Bank's Chartered Capital for the maximum period (another 3 years) allowed under its policy.

Issuing Bank Agreement for Trade Finance was signed between the Bank and Asian Development Bank, under which the Bank joined the Trade Finance Program of Asian Development Bank.

The second USD 5mln Loan Agreement for SME lending was signed between the Bank and Black Sea Trade and Development Bank.

A loan agreement for the AMD equivalent of US-D6mln was signed between the Bank and EBRD for on-lending to small and medium-sized businesses.

Became a member of VISA international clearing system.

Commerzbank AG of Germany granted “Excellence in quality” award for high-quality transfers in EUR in 2011.

Միացել է «Intexpress» վճարահաշվարկային համակարգին:

Joined Intel Express clearing system.

Գործարկվել են «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ», «ԳԱՎԱՌ» և «ՌՈՍԻԱ» մասնաճյուղերը, ինչպես նաև հասցեափոխված և անվանափոխված «ՍԱՐԱՋՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՐԸ:

Opened NUBARASHEN, GAVAR and ROSSIA branches as well as relocated and renamed SARAJOV BRANCH.

2012

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ն միացել է «Avers», «Unistream» և «Golden money transfer» վճարահաշվարկային համակարգերին:

ARMECONOMBANK OJSC joined Avers, Unistream and Golden Money clearing systems.

2013

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ն ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր:

ARMECONOMBANK OJSC received ISO/IEC 27001:2005(Information Security Management System) certificate.

«MoneyGram» վճարահաշվարկային համակարգը շնորհել է «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ» երկարաժամկետ և արդյունավետ համագործակցության հավաստագիր:

“EXCELLENCE IN QUALITY” a long term and effective cooperation certificate, was awarded by MoneyGram.

Գերմանական Commerzbank AG-ն «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2013թ. միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու, ինչպես նաև անթերի և արագ իրականացնելու համար:

Commerzbank AG of Germany granted ARMECONOMBANK OJSC the “Excellence for Quality” award for effecting high-quality, faultless and fast international transfers in 2013.

Գործարկվել է «ՀՐԱԶԴԱՆ-ՄԻԿՐՈ» ՄԱՍՆԱՃՅՈՒՐԸ:

Opened HRAZDAN-MIKRO branch.

2014

Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակ:

Asian Development Bank granted “Leading Partner Bank in Armenia” award to ARMECONOMBANK OJSC under Trade Finance Project.

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ն միացել է «Tandem» վճարահաշվարկային համակարգին:

ARMECONOMBANK OJSC joined Tandem clearing system

2015

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ն դարձել է արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ:

ARMECONOMBANK OJSC joined the securities index system.

«MoneyGram» վճարահաշվարկային համակարգը «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Պրոֆեսիոնալիզմի և Հայաստանում փոխանցման ծառայությունների զարգացմանը նպաստելու համար» հավաստագիր:

«MoneyGram» clearing system granted ARMECONOMBANK OJSC a Certificate for “Professionalism and Outstanding Contribution for Money Transfer Service Development in Armenia”

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ և «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության միջև կնքվեց 3 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են փոքր և միկրո բիզնեսի վարկավորմանը:

A loan agreement for USD 3 mln was signed between ARMECONOMBANK OJSC and «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC investment company for on-lending to small and micro businesses.

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով:

The top managers of ARMECONOMBANK OJSC and BTA BANK CJSC of Kazakhstan signed a memorandum of understanding on consolidation of BTA BANK CJSC, a bank registered and operating in RA, with ARMECONOMBANK OJSC.

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ միացել է «CONVERSE TRANSFER» վճարահաշվարկային համակարգին:

ARMECONOMBANK OJSC joined CONVERSE TRANSFER clearing system.

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 16.5 մլրդ դրամով կամ 17.9%-ով, իսկ երեք տարվա կտրվածքով՝ 34.2 մլրդ դրամով կամ 46.2%-ով: Ակտիվների շարժը և կառուցվածքը երեք տարվա համեմատականով ներկայացված է հետևյալ գրաֆիկներով և աղյուսակով.

Ակտիվներ (մլն. դրամ)
Assets (mln drams)



Երեք տարվա կտրվածքով բանկի միջին եկամտաբեր ակտիվներն աճել են 18.4 մլրդ դրամով կամ 40.2%-ով, իսկ 2014թ. համեմատ՝ 8.6 մլրդ դրամով կամ 15.5%-ով՝ կազմելով միջին ընդհանուր ակտիվների 64.1%-ը:

ASSETS

In the accounting year, compared with the previous year, the Bank's assets increased by AMD 16.5 bn or 17.9%, and over the past three years by AMD 34.2 bn or 42.2%.

Միջին եկամտաբեր ակտիվներ (մլն. դրամ)
Average earning assets (mln drams)



Over the past three years, the average earning assets increased by AMD 18.4 or 40.2 % and by AMD 8.6bn or 15.5% compared to 2014 to reach 64.1 % in average total assets.

(հազ. դրամ)
(thousand drams)

Ակտիվներ / Assets

	31.12.13	%	31.12.14	%	31.12.15	%
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Cash and cash equivalents	17,866,741	24.09	22,354,455	24.32	27,550,590	25.42
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ Due from financial institutions	2,521,027	3.40	5,147,575	5.60	7,128,134	6.57
Հակադարձ հետգնման պայմանագրեր Reverse repurchase agreements	1,379,833	1.86	1,255,797	1.37	832,166	0.77
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ Financial assets at fair value through profit or loss	-	-	54,263	0.06	-	-
Հաճախորդներին տրված վարկեր Loans to customers	40,693,742	54.87	52,057,388	56.63	59,175,240	54.59
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ Available-for-sale financial assets						
- Բանկի կողմից պահվող - Held by the Bank	2,521,046	3.40	49,478	0.05	338,213	0.31
- Հետգնման պայմանագրով գրավադրված - Pledged under repurchase agreement	4,624,479	6.23	6,118,811	6.66	8,527,788	7.87
Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում Investment in associate	245,192	0.33	194,991	0.21	-	-
Շահութահարկի գծով կանխավճար Profit tax prepayment	-	-	-	-	97,099	0.09
Հետաձգված հարկային ակտիվներ Deferred tax assets	-	-	35,921	0.04	105,444	0.10

Հիմնական միջոցներ Fixed assets	3,625,023	4.89	4,041,033	4.40	4,133,786	3.81
Ոչ նյութական ակտիվներ Intangible assets	88,497	0.12	95,021	0.10	83,116	0.08
Այլ ակտիվներ Other assets	597,760	0.81	514,278	0.56	423,612	0.39
Ընդամենը ակտիվներ Total assets	74,163,340	100.0	91,919,011	100.0	108,395,188	100.0

2015թ. միջին բարձր իրացվելի ակտիվները, նախորդ տարվա համեմատ, աճել են 3.9 մլրդ. դրամով կամ 16.7%-ով՝ կազմելով միջին ընդհանուր ակտիվների 27.0%-ը:

In 2015, as average liquid assets increased by AMD 3.9 bn or 16.7%, against the previous year, their ratio in average total assets reached 27.0%.

Միջին բարձր իրացվելի ակտիվներ (մլն. դրամ)
Average liquid assets (mln drams)



ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ (ԱՅՍՈՒՐԵՏ՝ ՎԱՐԿԵՐ)

2015թ., նախորդ տարվա համեմատ, բանկի վարկերն /որոնք զտված են պահուստաֆոնդի գումարի չափով/ աճել են 7.1 մլրդ դրամով կամ 13.7%-ով, իսկ երեք տարվա կտրվածքով՝ 18.5 մլրդ դրամով կամ 45.4%-ով: Հաշվետու տարում շարունակվեց բանկի կողմից առաջարկվող վարկատեսակների /սպառողական, հիփոթեքային, հեշտ, հեշտ+, գյուղատնտեսական և այլն/ բազմազանումը, ինչպես նաև վարկային տեխնոլոգիաների կատարելագործումը, վարկային ծրագրերում մասնաձյուղերի ներգրավումը: Վարկերի /որոնցից հանվել են պահուստաֆոնդը ըստ տարիների համապատասխանաբար՝ 817.4 մլն. դրամ, 736.6 մլն. դրամ և 1,002.4 մլն. դրամ/ շարժը և կառուցվածքային փոփոխություններն արտացոլված են ստորև բերվող գրաֆիկներում:

LOANS TO CUSTOMERS (HEREINAFTER LOANS)

In 2015, compared with the previous year, the loans (less provisions) increased by AMD 7.1 bn or 13.7%, and by AMD 18.5 bn or 45.4% over the past three years. In the accounting year, the Bank proceeded with diversification of loan types (consumer, mortgage, Easy, Easy+, agribusiness, etc.) as well as with enhancement of lending technologies and involvement of the branches in loan projects. The movement and structural changes of the loans (less allocations to provisions per years, AMD 817.4 mln and AMD 736.6 mln and AMD 1,002.4 mln accordingly) are reflected in the charts below.



Վարկեր (մլն. դրամ)
Loans (mln drams)



Հիփոթեքային վարկեր (մլն. դրամ)
Mortgage loans (mln drams)



Վարկերի կառուցվածք Structure of loans



Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, հիփոթեքային վարկերն աճել են 20.6 մլն. դրամով կամ 0.6%-ով:

31.12.15թ. դրությամբ վարկերի 13.9%-ը կամ 8,168.2 մլն դրամը միջազգային վարկային ծրագրերով, 1.4%-ը կամ 811.6 մլն. դրամը՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՓԲԸ ռեսուրսներով, 0.5%-ը կամ 307.6 մլն. դրամը՝ «Մատչելի բնակարան երիտասարդներին» ծրագրով, իսկ 84.2%-ը կամ 49,692.6 մլն դրամը սեփական ռեսուրսներով տրամադրված վարկերն են:

Արտահաշվեկշռային վարկերի (ղեբիտորական պարտքերի) վերադարձի ուղղությամբ ծավալված աշխատանքների արդյունքում հաշվետու տարում արտահաշվեկշռային վարկերից և տոկոսներից վերադարձը կազմել է 339.4 մլն. դրամ:

In the accounting year, mortgage loans increased by AMD 20.6 mln or 0.6% against the previous year.

As of 31.12.15, 13.9% or AMD 8,168.2 mln of the loans were given under international loan projects, 1.4% or AMD 811.6 mln were given out of the facilities from National Mortgage Company CJSC, 0.5% or AMD 307.6 mln were given under the Project for Affordable Apartments for Youth, and 84.2% or AMD 49,692.6 mln were given out of the Bank's own facilities. In the accounting year, the works on recovery of off-balance sheet loans debtor liabilities resulted in recovery of off-balance sheet loans and interest in the amount of AMD 339.4 mln..

ԱՐԺԵԹՂԹԵՐ

31.12.15թ-ի դրությամբ բանկի ներդրումներն արժեթղթերում (վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ՝ բանկի կողմից պահվող, հետգնման պայմանագրերով գրավադրված) կազմել են ակտիվների 8.2%-ը:

Արժեթղթեր (մլն. դրամ)
Securities (mln. drams)



SECURITIES

As of 31.12.15, the Bank's investments in securities (financial assets available for sale and pledged under repurchase agreements) reached 8.2% of assets.

Արժեթղթերի միջին տարեկան եկամտաբերություն
Average annual profitability of securities



Հաշվետու տարում բանկի ներդրումներն արժեթղթերում, նախորդ տարվա համեմատ, աճել են 2.7 մլրդ դրամով կամ 43.7%-ով, իսկ արժեթղթերի միջին տարեկան եկամտաբերությունը նվազել է 0.17 տոկոսային կետով՝ կազմելով 14.36%: Բանկը շարունակել է ակտիվ գործունեությունն արժեթղթերի երկրորդային շուկայում՝ համագործակցելով ինչպես խոշոր ինվեստիցիոն ընկերությունների, այնպես էլ ֆիզիկական անձանց հետ, որոնց թիվը կազմել է 11 հաճախորդ:

In the accounting year, the Bank's investments in securities increased by AMD 2.7 bn or 43.7% compared with the previous year, while the average annual profitability of securities decreased by 0.17% to make 14.36%. The Bank was active in the secondary market of securities as well and cooperated both with major investment companies and with individuals, 11 customers in total.

ՊԱՍԻՎՆԵՐ

LIABILITIES AND EQUITY

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, բանկի պասիվներն աճել են 17.9%-ով, ընդ որում պարտավորություններն աճել են 15.5%-ով, ընդամենը կապիտալը՝ 35.5%-ով:

In the accounting year, the Bank's liabilities and capital increased by 17.9% compared with the previous year. At that, the liabilities increased by 15.5%, and the total capital increased by 35.5%.

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է պասիվների կառուցվածքը երեք տարվա համեմատականով:

The structure of liabilities for the past three years is given in the table below:

	(մլն. դրամ) (mln drams)					
Պասիվներ Liabilities and equity	31.12.13	%	31.12.14	%	31.12.15	%
Ընդամենը պարտավորություններ Total liabilities	63,099.8	85.08	80,848.0	87.96	93,395.1	86.16
Ընդամենը կապիտալ Total equity	11,063.5	14.92	11,071.0	12.04	15,000.1	13.84
Ընդամենը պասիվներ Total liabilities and equity	74,163.3	100.0	91,919.0	100.0	108,395.2	100.0

Աղյուսակի տվյալները վկայում են, որ բանկի ընդամենը պարտավորությունների տեսակարար կշիռն ընդամենը պասիվներում 1.8 տոկոսային կետով նվազել է /87.96%-ից մինչև 86.16%/, իսկ սեփական կապիտալի տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար աճել /12.04%-ից մինչև 13.84%/:

The data in the table indicate that the ratio of total liabilities in total liabilities and equity has decreased by 1.8% (from 87.96% to 86.16%) and the ratio of equity has increased accordingly (from 12.04% to 13.84%).

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

LIABILITIES

2015թ., նախորդ տարվա համեմատ, բանկի պարտավորություններն աճել են 15.5%-ով կամ 12.5 մլրդ. դրամով, իսկ երեք տարվա կտրվածքով՝ 30.3 մլրդ. դրամով կամ 48.0%-ով: Պարտավորությունների խոշորագույն հոդվածի՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 2013թ. համեմատ 17.6 մլրդ. դրամով կամ 39.6%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ 4.45 մլրդ. դրամով կամ 7.7%-ով աճը վկայում է հաշվետու տարում արդյունավետ գործող հաճախորդների ներգրավման, ինչպես նաև բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:


Պարտավորությունների շարժը և կառուցվածքն արտացոլված է գրաֆիկում և աղյուսակում:

In 2015, the Bank's liabilities increased by 15.5% or AMD 12.5 bn compared with the previous year and by AMD 30.3 bn or 48.0% over the past three years. The growth of the most significant indicator, liabilities to customers, by AMD 17.6 bn or 39.6% compared with 2013, and by AMD 4.45 bn or 7.7 % compared with the previous year is evidence of attraction of efficiently operating customers as well as of continuous increase of customer confidence.

The movement and structure of liabilities are reflected in the chart and table below:

Ընդամենը պարտավորություններ (մլն. դրամ)
Total liabilities (mln drams)

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլն. դրամ)
Liabilities to customers (mln drams)



Պարտավորություններ
Liabilities

(հազ. դրամ)
(thousand drams)

	31.12.13	%	31.12.14	%	31.12.15	%
ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր Loans from RA Central Bank and RA Government	2,522,985	4.00	2,420,521	2.99	2,764,173	2.96
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ Amounts due to financial institutions	6,574,534	10.42	9,601,473	11.88	11,185,602	11.97
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ Loans and deposits from international financial institutions	4,093,722	6.49	3,076,403	3.81	2,997,550	3.21
Հետգնման պայմանագրեր Repurchase agreements	4,504,784	7.14	7,215,899	8.93	9,104,678	9.75
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ Financial liabilities at fair value through profit or loss	6,740	0.01	19,659	0.02	693	0.01

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ Liabilities to customers	44,391,776	70.35	57,525,303	71.15	61,973,987	66.35
Ընթացիկ շահութարկի գծով պարտավորություններ Current income tax liabilities	147,359	0.23	107,722	0.13	-	-
Ստորադաս փոխառություն Subordinated debt	-	-	-	-	4,425,604	4.74
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ Deferred income tax liabilities	206,396	0.33	-	-	-	-
Այլ պարտավորություններ Other liabilities	651,495	1.03	881,016	1.09	942,825	1.01
Ընդամենը պարտավորություններ Total liabilities	63,099,791	100.0	80,847,996	100.0	93,395,112	100.0

ԿԱՊԻՏԱԼ

Հաշվետու տարում բանկի հուսալիության կարևորագույն չափանիշի՝ բանկի ընդհանուր կապիտալի ապահովվել է նոր բաժնետոմսերի թողարկման և ձևավորված շահույթի հաշվին: 2015թ. շարունակվել է բանկի ընդհանուր կապիտալի նախորդ տարիների ընթացքում դրսևորած կայուն աճի միտումը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 35.5%-ով կամ 3.9 մլրդ. դրամով՝ կազմելով 15.0 մլրդ դրամ:


Ընդհանուր կապիտալ (մլն. դրամ)
Total equity (mln drams)



CAPITAL

In the accounting year, the growth of the most important indicator of the Bank's reliability, total equity, was accomplished on the account of profit and share emission. In 2015, the tendency of steady growth of the Bank's total equity of the earlier years continued; compared with the previous year, the growth was by 35.5 % or AMD 3.9 bn and reached AMD 15.0 bn.

(մլն. դրամ)
(mln drams)




(հազ. դրամ)
(thousand drams)

Սեփական կապիտալ Equity	31.12.13	%	31.12.14	%	31.12.15	%
Բաժնետիրական կապիտալ Share capital	2,333,338	21.09	2,333,338	21.08	2,333,338	15.56
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճար Advances received for shares to be issued	-	-	-	-	4,001,688	26.68
Հիմնական կապիտալ Core capital	9,991,955	90.31	10,808,751	97.63	15,096,371	100.64
Լրացուցիչ կապիտալ Supplementary capital	1,071,594	9.69	262,264	2.37	-96,295	-0.64
Ընդհանուր կապիտալ Total capital	11,063,549	100.0	11,071,015	100.0	15,000,076	100.0

31.12.15թ. դրությամբ բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը կազմել է 11,840.8 դրամ՝ 2500 դրամ անվանական արժեքի դիմաց:

As of 31.12.15, the balance-sheet value of the shares amounted to 11,840.8 against the nominal value of AMD 2,500 per share.



ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

INCOME AND EXPENSES

Հաշվետու տարում բանկի տոկոսային եկամուտները կազմել են 9,858.0 մլն դրամ՝ աճելով, նախորդ տարվա համեմատ, 1,515.1 մլն. դրամով կամ 18.2%-ով, իսկ երեք տարվա կտրվածքով՝ 2,621.4 մլն. դրամով կամ 36.2%-ով: Բանկի տոկոսային եկամուտների հիմնական մասը, ինչպես և նախորդ տարիներին, ձևավորվել է վարկային ներդրումներից և արժեթղթերից ստացված եկամուտներից:


Բանկի կոմիսիոն եկամուտները 2015թ., նախորդ տարվա համեմատ, նվազել են 48.1 մլն. դրամով կամ 3.2%-ով: Բանկի տոկոսային և կոմիսիոն եկամուտները երեք տարվա համեմատականով ներկայացված են ստորև բերվող գրաֆիկներով.

In the accounting year, the interest income amounted to AMD 9,858.0 mln as it increased by AMD 1,515.1 mln or 18.2% compared with the previous year, and by AMD 2,621.4 or 36.2% over the past three years. The bulk of the interest income, as in the preceding years, came from loans and securities.

In 2015, the income from fees decreased by AMD 48.1 mln or by 3.2% compared with the previous year. The Bank's income earned in form of interest and fees is presented in the charts below for the past two

Տոկոսային եկամուտներ (մլն. դրամ)
Interest income (mln drams)

Կոմիսիոն եկամուտներ (մլն. դրամ)
Income from fees (mln drams)



Ինչպես նախորդ տարիներին, 2015թ. և ուշադրության կենտրոնում է գտնվել կատարվող ծախսերի արդյունավետության և կառուցվածքի օպտիմալացման հիմնախնդիրը: Բանկի տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 29.9%-ով կամ 1,223.6 մլն. դրամով՝ կազմելով 5,317.1 մլն. դրամ: Միևնույն ժամանակ անձնակազմի գծով ծախսերը նվազել են 54.9 մլն. դրամով կամ 1.6%-ով, իսկ այլ ծախսերը (ինկասացիոն ծառայության, անվտանգության գծով, հարկեր և տուրքեր, գովազդի և ներկայացուցչական ու այլ ծախսեր) աճել են 119.9 մլն. դրամով կամ 6.4%-ով՝ պայմանավորված բանկի գործունեության ծավալների աճով: Բանկի տոկոսային, անձնակազմի գծով և այլ ծախսերը երեք տարվա համեմատականով ներկայացված են ստորև բերվող գրաֆիկներով.

In 2015, the optimization of both the efficiency and the structure of the expenses remained in focus, like in the preceding years. Compared with the previous year, interest expenses increased by 29.9% or AMD 1,223.6 mln to reach AMD 5,317.1 mln. At the same time, personnel costs decreased by AMD 54.9 mln or 1.6% and other expenses (cash transportation, security, taxes and duties, advertizing and representational costs, etc.) increased by AMD 119.9 mln or 6.4% due to the increase in operations' scope. The interest expenses, personnel costs, and other expenses for the past three years are presented in the charts below:

Տոկոսային ծախսեր (մլն. դրամ)
Interest expenses (mln drams)

Անձնակազմի գծով ծախսեր (մլն. դրամ)
Staff costs (mln drams)



Այլ ծախսեր (մլն. դրամ)
Other expenses (mln drams)



ՇԱՐՈՒՅԹ, ՇԱՐՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականը նրա ձևավորած շահույթն ու շահութաբերությունն են: 2015թ. բանկի շահույթը կազմել է 449.3 մլն. դրամ:

Ստորև ներկայացվում են բանկի շահույթի, շահութաբերության տվյալները.

PROFIT, PROFITABILITY

Profit and profitability are the most important indicators for appraisal of the Bank's operation. In 2015, the Bank's profit amounted to 449.3 mln AMD.

The profit and profitability indicators are presented below:

Ցուցանիշ / Indicator	31.12.13	31.12.14	31.12.15
ROA (return on assets) /շահույթ ակտիվների միավորի նկատմամբ/, %	0.97	0.89	0.41
ROE (return on equity) /շահույթ ընդհանուր կապիտալի նկատմամբ/, %	6.48	7.38	3.0
EPS (earnings per share) /շահույթ 1 բաժնետոմսի նկատմամբ/ (AMD)	767.9	875.1	481.4
Շահույթ, մլն դրամ / Profit, mln drams	716.7	816.8	449.3


Հաշվետու տարում բանկի գործունեության շահութաբերության հիմնական ցուցանիշները փոփոխվել են հետևյալ կերպ: Այսպես, բանկի կառավարման արդյունավետությունը բնորոշող՝ միավոր ակտիվի նկատմամբ ձևավորված շահույթի գործակիցը նվազել է 0.48 տոկոսային կետով, իսկ բաժնետերերի տեսակետից կարևոր բնութագրիչ հանդիսացող միավոր կապիտալի նկատմամբ ձևավորված շահույթի գործակիցը՝ 4.38 տոկոսային կետով: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի գործակիցը նվազել է 393.7 դրամով կամ 45.0%-ով:

In the accounting year, the basic indicators of the Bank's profitability changed as follows. The ratio of return on unit asset, a definitive indicator for management efficiency, decreased by 0.48% and the ratio of return on unit capital, an important feature from shareholders' point of view, decreased by 4.38%. The ratio of earnings per share decreased by AMD 393.7 or 45.0.

Զուտ շահույթ (մլն. դրամ)
Net profit (mln drams)



ROA / ROE



Բանկը կարևորում է ռիսկերի կառավարման մշակույթի կատարելագործումը՝ սահմանելով որոշումների կայացման գործընթացներում ռիսկերի գնահատման արդյունքների ընդգրկվածության աստիճանի բարձրացման և ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման քաղաքականությունը որպես հեռանկարային զարգացման գերակա ուղղություն:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտման, նույնականացման, գնահատման, հսկողության և գնահատված ռիսկերին արձագանքման փուլերից:

Բանկի համախառն ռիսկը (ներդրված մոդելի շրջանակներում) կառավարվում է արտարժույթային, վարկային, իրացվելիության և տոկոսադրույթի փոփոխման ռիսկերի և դրանց գումարային էական մակարդակների սահմանման և մոնիտորինգի միջոցով: Բանկի գործունեության ռիսկայնության համակարգային գնահատման նպատակով առանձնացվում և գնահատվում է նաև վարկի ռիսկը, որը տնտեսության մեջ առկա խնդիրների հնարավոր շղթայական զարգացումների բացասական ազդեցությունն է բանկի գործունեության վրա:

Համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ «Ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում առանձնացվում են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- տոկոսադրույթի փոփոխման ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- արտարժույթային ռիսկ,
- գործառնական ռիսկ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում են սթրես Թեստավորման և

The Bank attaches significant importance to the development of risk management culture as it sets the policy of higher involvement of risk assessment results in decision-making processes and further development of the risk management system as a major direction in prospective development.

The risk management process includes phases of discovery, identification, assessment, monitoring of possible risks, and responding to the assessed risks throughout the Bank's operations.

The Bank's gross risk (within the framework of the implemented model) is managed through determination and monitoring of foreign currency, credit, liquidity, and interest rate risks and their aggregate material levels. To assess the overall system risk in Bank's operations, contamination risk which represents the negative impacts of chain developments of existing economic problems on Bank's operation is separated and assessed.

Pursuant to ARMECONOMBANK OJSC Risk Management Policy and the principles of risk management of Basel Committee and GARP (Generally Accepted Risk Principles), the following models of assessment and management of basic risks have been adopted:

- Credit risk;
- Interest rate risk;
- Liquidity risk;
- Foreign exchange risk;
- Operational risk.

Credit risk

Credit risk is the possible danger of late repayment or non-repayment of a loan, accrued interest, or a part thereof due to worsening of borrower's financial condition, devaluation of collateral, or other similar causes.

Stress tests and various probable scenarios are used to analyze and assess the impacts of different possible changes in loan portfolio structure on the indicators of the Bank's current operations. Within the framework of the analysis of the aforementioned stress scenarios, calculation and analysis of critical points for deviations from regulatory standards is performed

Thanks to the efficient system of credit risk management, the loan portfolio of the Bank continues to maintain its traditionally high quality and low risk level.

Interest rate risk

Interest rate risk is the probability of the negative impact of any changes of market interest rate on net interest income or economic value of the capital.

To assess the interest rate risk, the Bank uses the internationally accepted GAP Model, Duration Model, and stress tests based on analysis of any imbalance between assets and liabilities that are sensitive to interest rate fluctuations.



տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ Բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման (տոկոսադրույքի) ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Բանկում տոկոսադրույքների փոփոխման ռիսկը գնահատվում է միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի», «Ղյուրացիայի մոդելի» և սթրես թեստերի կիրառմամբ, որոնց հիմքում ընկած է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի վերլուծությունը:

Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ձեռքբաժանների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից:

Եռամսյակային և տարեկան կտրվածքով իրականացվող՝ Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա տոկոսադրույքների փոփոխության ազդեցության սցենարային վերլուծության և սթրես թեստավորման արդյունքները ներառված են Բանկի իրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների որոշակի բաժնեմասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի բաժնեմասի ետ պահանջման դեպքում (ինչպես նաև նշված բաժնեմասերի տարբեր հնարավոր համակցությունների դեպքերում) նորմատիվների փոփոխությունների և դրանց խախտման հավանականության գնահատման նպատակով Բանկում կիրառվում է սթրես թեստավորման սցենարային մոդել, որը հնարավորություն է տալիս, իրացվելիության նորմատիվների վրա

Also, analyses of gaps between assets and liabilities in individual currencies are conducted with a view to the impact of fluctuations of their interest rates on net interest income.

The results of quarterly and annual scenario analyses and stress tests of the impact of interest rate changes on the Bank's net interest income and capital are included in the notes enclosed in the published interim and annual financial reports.

Liquidity risk

Liquidity risk is the probability that the Bank may not be able to timely meet the demands of its creditors without incurring additional losses.

To assess the changes and the probability of deviations from regulatory standards in the event of full or partial pre-term withdrawal of term and demand deposits by individuals and companies (as well as various possible combinations of such withdrawals), scenario-based stress-test models are employed to calculate the critical points for deviations from liquidity standards as alternative estimates of the Bank's liquidity risk based on assessment of the impact of various probable shock situations on such standards.

The economic-mathematical model of assessment of the concentration risk for demand and term resources attracted by the Bank allows to assess the concentration levels of the resources attracted from individuals and corporate entities. In the framework of this model, calculation of the concentration coefficients of the resources attracted from individuals and corporate entities, analysis of their dynamics, calculation of total weighted average concentration, quantile and graphic analyses of concentrations, as well as analysis of the possible impact of the concentration risk on liquidity standards based on stress test methodology are carried out.

Foreign exchange risk

Foreign exchange risk is the probability of losses for the Bank due to currency exchange rate fluctuations.

The management of foreign currency risk is performed through internationally accepted VAR methodology and scenario analyses of stress tests. These analyses address the impact of rapid fluctuations of foreign currency exchange rates on prudential standards. Stress scenarios involving revaluation and devaluation of Armenian dram and combinations of scenarios involving exchange rate fluctuations for individual currencies that would inflict maximum loss are examined to provide for maximum protection and hedging of foreign exchange risk.

The economic-mathematical model of assessment of maximum losses probable due to fluctuations of foreign currency exchange rates – as developed based on VAR methodology and used to ensure the minimum level of foreign currency risk – allows assessing the risk of probable losses conditioned by open foreign exchange positions of the Bank.

շուկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցության գնահատման հիման վրա, նաև հաշվարկել նշված նորմատիվների խախտման կրիտիկական կետերը:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների մակարդակները: Նշված մոդելի շրջանակներում իրականացվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված միջոցների կենտրոնացվածության գործակիցների հաշվարկ, դրանց դինամիկայի վերլուծություն, բանկի ընդհանուր կշռված միջին կենտրոնացվածության հաշվարկ, կենտրոնացվածության քվանտիլային և գրաֆիկական վերլուծություն, ինչպես նաև իրացվելիության նորմատիվների վրա կենտրոնացվածության ռիսկի հնարավոր ազդեցության վերլուծություն՝ կիրառելով սթրես թեստերի մեթոդաբանությունը:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Դիտարկվում են ՀՀ դրամի արժեվորման և արժեզրկման սթրեսային սցենարներ, ինչպես նաև ըստ առանձին արտարժույթների փոխարժեքների տատանման սցենարային համակցության տարբերակ, որի դեպքում հնարավոր վնասը կկազմի առավելագույնը՝ ապահովելով հնարավոր առավելագույն չափի արտարժույթային ռիսկից պաշտպանվածություն և հեջավորում:

Արտարժույթային ռիսկի նվազագույն մակարդակի ապահովման նպատակով կիրառվող, VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված, արտարժույթների փոխարժեքների տատանումներից հնարավոր առավելագույն վնասների գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի արտարժույթային բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը:

Operational risk

The operational risk is defined as a threat of direct or indirect losses caused or conditioned by inadequate or incorrect (accidental or intentional) activities of the personnel, weaknesses in organization and execution of the Bank's operations, breakdowns (technical malfunction of equipment, imperfectness of procedures) as well as by adverse activities and situations in the environment (fraud, natural disasters).

The application of an efficient risk monitoring system is conducted through everyday monitoring, regular and target-specific audits to provide for assessments of prudence of the existing regulations, identification of functions requiring regulation, revelation of possible risks, measures aimed at reduction

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ՝ առաջացած կամ պայմանավորված բանկի անձնակազմի ոչ համարժեք կամ սխալ (պատահական, միտումնավոր) գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով (սարքավորումների տեխնիկական անսարքություն, ընթացակարգերի անկատարություն), ինչպես նաև արտաքին միջավայրի անբարենպաստ գործողություններով և իրավիճակներով (խարդախություն, տարերային աղետ):

Գործառնական ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի կիրառումն ապահովվում է՝ օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառնական վերահսկման, հնարավոր ռիսկերի բացահայտման, ռիսկերի զսպմանը և ապագայում դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման միջոցով:

ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության գործուն և արդյունավետ համակարգի շարունակական զարգացման գործընթացին՝ ապահովելով մատուցվող ծառայությունների, կատարվող գործառնականությունների հստակ կանոնակարգումը: Բանկի ներքին հսկողության պատշաճ ապահովման կարևոր գրավականներից է ներքին վերահսկողության համակարգի արդյունավետ գործունեությունը: Դրա հետ կապված նշենք, որ հաշվետու տարում իրականացվել է բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների թվով 61 համալիր վերստուգումներ, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների դրամարկղային հանգույցների թվով 52 գույքագրումներ, ինչպես նաև բանկի հաշվապահական հաշվառման վարման հստակությանը, ռիսկերի նվազեցմանը, գործող կարգերին և մշակված պայմանագրերին ու Բանկի գործունեության այլ ոլորտներին վերաբերվող թվով 7 նպատակային վերստուգումներ:

Նշված վերստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը և վերլուծությունը նպատակաուղղվել է գործող թերությունների վերացմանը, բացահայտված ռիսկերի կանոնակարգմանը, կանխարգելիչ միջոցառումների մշակմանը և այդ ամենի արդյունքում բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության նվազեցմանը և պատշաճ հսկողության ապահովմանը:

INTERNAL CONTROL SYSTEM

The Bank pays special attention to continuous development of a practical and efficient system of internal control to ensure clear regulation of its services and operations. One of the guarantees of having adequate internal control in place is the efficient operation of the Bank's internal audit system. With respect to this, we should mention that in the accounting year 61 overall audits of territorial and structural subdivisions, 52 inventories of teller sectors in territorial and structural subdivisions, as well as 7 target audits related to accuracy of accounting, risk reduction, existing procedures and agreements, and other areas of the Bank's activities were carried out.

The summaries and analyses of the results of the aforementioned audits and studies were used for elimination of the existing weaknesses, regulation of the revealed risks, and development of preventive measures to reduce the overall risk level in the Bank's operations and ensure that appropriate control is in place.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԿՆՈՐԴՆԵՐ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հանդիսանալով ունիվերսալ կառույց, իր գործունեությունը նպատակաուղղում է հաճախորդներին ծառայությունների ընդգրկուն փաթեթով ապահովմանը, որը ենթադրում է մատուցվող ծառայությունների մշտական բազմազանում և սպասարկման որակի բարձրացում:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաջողությունների կարևորագույն գրավականը հաճախորդների արդյունավետ սպասարկումն է: Բանկի հաճախորդները գտնվում են մշտական ուշադրության կենտրոնում և արվում է ամեն հնարավորն առավել ընդգրկուն բավարարելու նրանց պահանջարկը բարձրակարգ բանկային ծառայությունների նկատմամբ, որը ենթադրում է մատուցվող ծառայությունների մշտական բազմազանում և սպասարկման որակի բարձրացում: Բանկը հաճախորդներին առաջարկում է բանկային ժամանակակից ծառայությունների և տեխնոլոգիաների ընդգրկուն փաթեթ, որը նպատակ ունի ոչ միայն բավարարել առկա պահանջարկը, այլ նաև ձևավորել նոր պահանջարկ առաջարկվող ծառայությունների նկատմամբ: Ծառայությունների անընդհատ թարմացումը և ստանդարտացումը մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Պարբերական մոնիտորինգը և հարցումները թույլ են տալիս բանկին թե՛ տարածքային, թե՛ իրավական կարգավիճակի, թե՛ տարիքային և սոցիալական խմբերի դասակարգմամբ արագ արձագանքել նոր պահանջարկի բավարարմանը, մատուցվող ծառայությունների կատարելագործմանը, որն իր դրական արտացոլումն է գտնում սպասարկման որակի, նոր հաճախորդների ներգրավման և, ըստ այդմ, բանկի եկամուտների ավելացման վրա:

Հաշվետու տարվա մատուցված նոր ծառայություններից հատկանշական է այն, որ Բանկը սկսեց տրամադրել առանց եկամուտը հավաստող փաստաթղթի անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր:

Հաշվետու տարում ի լրումն այլ վճարային համակարգերի, բանկը սկսեց փոխանցումներ իրականացնել նաև «CONVERSE TRANSFER» վճարային համակարգով:

Հաշվետու տարում 253-ով կամ 0.2%-ով ավելացնել է հաճախորդների քանակը: Ներգրավվել են հեռանկարային, կայուն զարգացող հաճախորդներ, ինչը հնարավորություն տվեց ավելացնել բանկի միջին տարեկան ցպահանջ միջոցների մնացորդները:

31.12.15թ. դրությամբ բանկը սպասարկում է ավելի քան 133.6 հազար հաճախորդների, որոնց դասակարգումն ըստ իրավական կարգավիճակի և տարածաշրջանների ներկայացված է գրաֆիկներով:

SERVICES AND CUSTOMERS

As a universal institution, ARMECONOM-BANK OJSC aims its activities at offering its customers comprehensive service packages, which implies continuous diversification of the services and improvement of the service quality.

Efficient customer service is a major guarantee of success for ARMECONOMBANK OJSC. The customers are in constant focus and the Bank has been doing the utmost to fully satisfy their need for high-quality banking services, which in its turn implies continuous diversification of the services offered and improvement of service quality. The Bank offers its customers a comprehensive package of modern banking services and technologies not only to satisfy their present needs, but also to develop new demands for the offered services. The continuous updating and standardization of the services is under the management's permanent attention. The regular monitoring and surveys enable the Bank to classify the customers by location, legal status, age, and social group to rapidly respond to any new demands and any needs for further improvement of services, which in its turn has positive impact on service quality, attraction of new customers and, accordingly, on the earnings.



Among the new services launched in the accounting year, the housing loans secured by real estate and with no proof of income are notable.

In the accounting year, in addition to other clearing systems, the Bank began making transfers through CONVERSE TRANSFER clearing system.

In the accounting year, the Bank increased the number of its customers by 253 or 0.2%. Prospective and steadily developing customers were attracted and this in its turn resulted in growth of average annual balances of demand cash facilities.

As of 31.12.15, the Bank serviced more than 133.6 thousand customers. Their classification per legal status and location is presented in the following charts:

Հաճախորդներ
Customers
31.12.2015



**ՎՃԱՐԱԿԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՓԱՍՏԱԹՂԹՎՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բանկի կողմից մատուցվող վճարահաշվարկային և փաստաթղթային ծառայություններն առանձնահատուկ տեղ են գրավում հաճախորդներին առաջարկվող ծառայությունների շարքում: Բանկն ակտիվորեն օգտագործում է առկա համակարգերի հնարավորությունները՝ արդյունավետ աշխատանքներ ծավալելով նաև վճարման նոր ձևերի մշակման ու ներդրման առումով: Այսպես, բանկը դրամական փոխանցումներ է իրականացնում «MoneyGram», «Anelik», «Ria Money Transfers», «Sigue Money Transfer», «IntelExpress», «Unistream», «Golden Money Transfer», «Converse Transfer» և «MoneyTun» համակարգերով՝ իր հաճախորդին տալով ընտրության լայն հնարավորություն: Հաշվետու տարում վճարահաշվարկային ծառայություններից ստացված եկամուտները կազմել են 696.7 հազ. ԱՄՆ դոլար՝ նվազելով նախորդ տարվա համեմատ 192.3 հազ. ԱՄՆ դոլարով կամ 21.6%-ով: Ստորև բերվող գրաֆիկում ներկայացված է վճարահաշվարկային ծառայություններից ստացված եկամուտները երեք տարվա համեմատականով.

**CLEARING SERVICES,
DOCUMENTARY
OPERATIONS**

The clearing and documentary services provided by the Bank have a special place in the range of services offered to the customers. The Bank makes extensive use of the possibilities of the existing clearing systems and, at the same time, efficiently works on development and implementation of new payment methods. Currently, the Bank executes money transfers through MoneyGram, Anelik, Ria Money Transfers, Sigue Money Transfer, IntelExpress, Avers, Unistream, Golden Money Transfer, Converse Transfer, and MoneyTun clearing systems, thus offering its customers a wide choice. In the accounting year, the earnings from clearing services amounted to USD 696.7 thousand as they decreased by USD 192.3 thousand or 21.6% and reached USD 696.7 thousand compared with the previous year. The earnings from clearing services for the past three years are shown below:

Վճարահաշվարկային համակարգերով
փոխանցումներից ստացված եկամուտ (հազ. ԱՄՆ դոլար)
Income from transfers via clearing systems (thous. USD)



Բանկն առաջատար դիրքեր է զբաղում ՀՀ փաստաթղթային գործառնությունների շուկայում՝ ակտիվ գործունեություն ծավալելով ինչպես չեկերի թողարկման և սպասարկման, այնպես էլ փաստաթղթային գործառնությունների այլ ոլորտներում, հատկապես ակրեդիտիվների թողարկման և սպասարկման բնագավառում:

The Bank holds leading positions in the Armenian market of documentary operations, being active both in the area of issuing and servicing of bank cheques and in other documentary operations, especially such as issuing and servicing of letters of credit.

ԿԱԴՐԱՅԻՆ ԲԱՆԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

HUMAN RESOURCES

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակներում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը, որը ենթադրում է բանկի կադրերի ընտրության, վերապատրաստման, պահեստային բանկի ստեղծման, պաշտոնային առաջընթացի հստակ պլանավորված համակարգի ներդրում:


Հաշվի առնելով բանկային ռիսկերի կառավարման, ինչպես նաև առաջընթաց և կայուն զարգացման համար կարևորագույն գործոնի՝ համախմբված թիմային աշխատանքի դերը՝ մեծ տեղ է հատկացվում գործող կադրերի վերապատրաստմանը, սահուն սերնդափոխությանը, նոր, հեռանկարային կադրերի ներգրավմանը՝ լայնորեն օգտվելով մրցութային ընտրությունից, ստաժավորման կազմակերպման գործընթացից, մասնագիտական առաջատար ԲՈՒՀ-երի հետ համագործակցությունից:

Ստորև բերված գրաֆիկներում ներկայացված են բանկի աշխատողների շարժը և դասակարգումն ըստ կրթության:

In line with further development of the Bank's corporate governance system, efficient human resources policy is a priority which implies availability of a well-planned system for personnel selection, training, establishment of a reserve personnel pool, and career advancement.

Considering consolidated teamwork as the most significant element both in banking risk management and in progressive and steady development, the Bank pays great attention to personnel training, smooth shift of workforce generations, attraction of new and prospective specialists as it makes extensive use of contest-based recruitment, internship, and cooperates with the leading higher educational institutions in Armenia.

In the chart below, the turnover of the Bank's employees and their classification per educational background are presented.



Բանկի աշխատակիցների մեծամասնությունը՝ 56.4%-ը կանայք են, համապատասխանաբար 43.6%-ը տղամարդիկ: Հաշվետու տարում, նախորդի համեմատ, 0.9%-ով աճել է բարձրագույն կրթությամբ աշխատակիցների թվաքանակը՝ կազմելով աշխատակազմի 73.3%-ը: Բանկի աշխատակիցների 30.0%-ն ունեն 10 և ավելի տարի բանկային աշխատանքի ստաժ, 28.1%-ը՝ 5-ից 10 տարի բանկային ստաժ, 35.8%-ը՝ 1-ից 5 տարի և 6.1%-ը՝ մինչև 1 տարի: Բանկի աշխատակազմի խոշորագույն տարիքային խումբը՝ 25-34 տարեկան աշխատակիցներն են, որոնք կազմում են աշխատակիցների թվաքանակի 41.3%-ը:

31.12.2015թ. դրությամբ բանկի աշխատակիցների ընդհանուր քանակը կազմել է 904 մարդ, նվազելով նախորդ տարվա համեմատ 3.4%-ով՝ հիմնականում պայմանավորված կառուցվածքային փոփոխություններով և հաստիքների վերանայմամբ:

The majority of the Bank's employees, 56.4%, are female and, accordingly, 43.6% are male. In the accounting year, the number of employees with university education increased by 0.9% to reach 73.3% of the personnel. 30.0% of the employees have 10 and more years of banking work experience, 28.1% have 5 to 10 years, 35.8% have 1 to 5 years, and 6.1% under 1 year. The largest age group includes employees aged 25-34 and accounts for 41.3% of the total number of employees.

As of 31.12.2015, the total number of employees counted 904; it has decreased by 3.4% compared with the previous year mainly due to structural changes and review of staff-lists.

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

BRANCH NETWORK

2015թ. արդյունավետ էր տարածքային քաղաքականության՝ բանկի մասնաձյուղերի զարգացման առումով:

Բանկի որդեգրած տարածքային քաղաքականության շրջանակներում իրականացվել են լայնածավալ աշխատանքներ գործող մասնաձյուղերի ինչպես վերանորոգման, այնպես էլ վերակառուցման, ընթացիկ տեխնիկական վերազինման ուղղությամբ բարձրացնելով մասնաձյուղերի մրցունակությունը: Իրականացվել է մասնաձյուղերի գործունեության ռեյտինգավորման ընթացակարգի կատարելագործում, որն ուղղված է աշխատակիցների վարձատրման համակարգի

2015 was beneficial for the territorial policy in terms of further development of the branches.

In line with the Bank's territorial policy, significant work was done for repairs, reconstruction, and technical modernization of the operating branches to enhance their competitiveness. Further improvement of the rating of branch operations occurred to make the remuneration system more efficient. The operations of branches expanded in all areas; the involvement of branches in new loan projects increased both in Yerevan and in regions.

It should be noted that the branches opened earlier demonstrated tendency of stable growth.

In the accounting year, the growth of branch

արդյունավետության բարձրացմանը: Ընդլայնվել է մասնաձյուղերի գործունեությունը բոլոր ոլորտներում, Երևան քաղաքի և ՀՀ մարզերի մի շարք մասնաձյուղեր ակտիվորեն ներգրավվել են նոր վարկային ծրագրերում:

Նշենք, որ նախորդ տարիներին բացված մասնաձյուղերը դրսևորեցին կայուն աճի միտում:

Հաշվետու տարում մասնաձյուղերի ակտիվների և պարտավորությունների աճը զուգակցվեց նոր հեռանկարային հաճախորդների ներգրավմամբ, մատուցվող ծառայությունների ընդլայնմամբ և բազմազանմամբ:

Մասնաձյուղերի գործունեությունը բնորոշող հիմնական ցուցանիշների փոփոխությունները երեք տարվա համեմատականով արտացոլված են գրաֆիկներով և աղյուսակով:

assets and liabilities occurred parallel with attraction of new prospective customers and expansion and diversification of the services offered.

The changes of the main indicators of branch operations for the past two years are reflected in charts and table:

Մասնաձյուղերի ժամկետային ավանդներ (միջին) մլն. դրամ
Term deposits of branches (average) (mln drams)



Մասնաձյուղերի վարկեր (միջին) մլն. դրամ
Loans of branches (average) (mln drams)



Մասնաձյուղերի ցպահանջ ավանդներ (միջին) մլն. դրամ
Demand deposits of branches (average) (mln drams)




(մլն. դրամ)
(mln drams)

Մասնաձյուղերի ցուցանիշներ Branch indicators	2013	2014	2015	Տարեկան աճ Annual growth 2015/2014	Տարեկան աճի տեմպերը Annual growth rate (%)
Վարկային ներդրումներ /միջին/ Loan investments /average/	24,684.4	31,283.8	35,473.2	4,189.4	13.4
Ժամկետային ավանդներ /միջին/ Term deposits /average/	10,302.1	13,300.6	14,941.5	1,640.9	12.3
Ցպահանջ ավանդներ /միջին/ Demand deposits /average/	6,592.6	8,264.3	13,178.3	4,914.0	59.5
Մատուցված ծառայություններից զուտ եկամուտ Net income from services	1,177.3	1,197.3	1,047.8	-149.5	-12.5
Արտահաշվեկշիռ վարկերի վերադարձ Recovery of off-balance sheet loans	75.4	67.2	169.2	102.0	151.8
Արտահաշվեկշիռ տոկոսի վերադարձ Recovery of off-balance sheet interest	5.8	3.4	10.9	7.5	220.6
Վարկային ներդրումներ/ժամկետային ավանդներ /%/ Loans/Term deposits /%/	239.6	235.2	237.4	2.2	-

**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՄԱՍՆԱՃՅՈՒԴԵՐՆ ԸՍՏ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ**

**ARMECONOMOBANK OJSC
BRANCHES PER REGION**



**ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ
BRANCHES**

**ՀԱՍՑԵ
ADDRESS**

**ՀԵՌԱԽՈՍ
TEL.**

1	«ՇԵՆԳԱՎԻՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SHENGAVIT BRANCH	ՀՀ 0026, ք. Երևան, Գարեգին Նժդեհի փող 28 28 Garegin Nzhdeh St., Yerevan 0026, RA	+374 10 510 910(0101) +374 10 510 910(0102)
2	«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SPANDARYAN BRANCH	ՀՀ, 0001, ք. Երևան, Արովյան փող. 22 22 Abovyan St., Yerevan 0001, RA	+374 10 510 910(0401) +374 10 510 910(0402)
3	«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ KHORHRDAYIN BRANCH	ՀՀ 0056, ք. Երևան, Նորքի 1-ին մ/շ 14/15 շենք 14/15 Nork 1, Yerevan 0056, RA	+374 10 510 910(0701) +374 10 510 910(0702)
4	«ԱՐԱԲԿԻՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARABKIR BRANCH	ՀՀ, 0057, ք. Երևան Կոմիտասի փող. 57, թիվ 23 շինություն 57 Komitas St., bl. 23, Yerevan 0057, RA	+374 10 510 910(0501) +374 10 510 910(0502)
5	«ԷՐԵԲՈՒՆԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ EREBOUNI BRANCH	ՀՀ, 0005, ք. Երևան, Արցախի փող. 24 24 Artsakh St., Yerevan 0005, RA	+374 10 510 910(0601) +374 10 510 910(0602)
